

26 Ապտեմբեր 1968

Ազնուափայլ Տիկին Շ. Պարսամբան
Ատենապետուհի Ս. Խաչ Հայ Վարժարանի
Նիւ Եւրո

Սիրելի Տիկին,

Ստացած եմ ձեր 24 Ապտեմբեր լուսկիր նամակը
Վարժարանի Խամակալութեան Միակն Խորհուրդի
միջեւ ծագած դրամական հարցին շուրջ:

Վստահ եմ որ եղածը անհասկացողութեան մը արդիւնքն
է եւ երբ անձնապէս կարելիութիւնը ունենամ Միակն
Խորհուրդի անդամներուն հետ տեսակցիլ այդ մասին,
խնդիրը պիտի լուսարանուի: Դժբախտաբար երկու օրէն
կը մեկնիմ Ամերիկայէն եւ միայն Հոկտեմբեր 20 ին
պիտի վերադառնամ:

Մինչ այդ, իմ համոզումս ալ այն է լի վարժարանը
առանցին Մարմին մըն է եւ երբ ձեր Ատենապետ եւ
Գանձապահը եւնիք, իրաւունք ունիք ձեր խնդիրները
ձեր միջեւ կարգադրելու առանց Միակն Խորհուրդի
միջամտութեան: Անշուշտ որ Միակն Խորհուրդը
Ծկեղծելոյ բարձրագոյն Մարմինն է եւ սակայն ինչպէս
վերջ ըսի, վստահ եմ որ թիւթացութիւն մըն է կողմը
եւ երբ վերադառնամ այդ մասին պիտի տեսակցիմ Միակն
Խորհուրդի անդամներուն հետ լուսարանելով հարցը:
Անշուշտ որ միջեւ որ երկու կողմին հետ ալ չի տեսակ
ցիմ վերջնական որոշման մը չեմ կրնար յանգիլ:

Մաղթելով ձեզ յաջողութիւն եւ կարողութիւն ձեր ազգանուէր
գործունէութեան մէջ, եւ սպասելով վերադարձիս,

Մնամ անկեղծօրէն,

Հայկ Գալուրճեան

ՀԳ:պփ

Ս. ԽԱԶ ՀԱՅՈՍԱՆՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross Church of Armenia

Ն Ի Ի Ե Ո Ր Ք Ի

580 WEST 187TH STREET
NEW YORK, N. Y. 10033
WADSWORTH 7-4020

ՄԱՄԻԿՈՆ ՔԷՆՅՈՒ ՈՍԿԱՆԵԱՆ

REV. MAMIGON VOSGANIAN, Pastor
24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1968

Հագիւոք Հովիւ

ԱԶՆՈՒԱՄԵՍԱՐ
ՏՈԱՐ ՀԱՅԿ ԳԱՂՈՒԹՅԵԱՆ
ԵՒ ՊԱՏՈՒԱՐՁԱՆ ԱՆԴԱՄՔ
ԱՌԱՆԴԱՊԱՀ ՄԱՐՄՆԻ
ՍՈՒՐԲ ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՑ
Ն Ի Ի Ե Ո Ր Ք Ի

Սիրելի Պրն. Հ. Գավուգեան.

Ինչպէս որ ծանօթ է Ձեզ, Ս. Խաչ եկեղեցիէն ներս, երկար տարիներու համեստ ծառայութիւն մը ունինք, հայ գիրին, եւ հայ մանկուոյն, մանաւանդ նորահաս մտերիկածին հայ սերունդին, հոգ տանելով, ուսուցանելով հայ լեզուն եւ հայկական աւանդութիւնները:

Ուրախ ենք յնաեւ որ մեր այս համեստ մշտնջենական միջոց կը գնահատուի Ձեր կողմէ: Ղարձեալ, ուրախութեամբ պիտի յայտնենք թէ, մեր Ս. Խաչ հայ վարժարանը տարուէ տարի կը յառաջդիմէ, եւ այս տարի ալ ունինք մօտաւորապէս 60 աշակերտներ:

Մեր աշխատանքներուն եւ շնորհքուն, նաեւ մեր առատաձեռն ժողովուրդին, վարժարանս ունի 2500 տոլարի մօտ գումար մը, որ իսկ կը մնայ պահին մէջ Ս. Խաչ հայ դպրոցի անուանով, կուզենք հոս 2 եշտել թէ մեր ամսուան ծախքն է, 300 տոլարէ աւելի, երկու պըսերու եւ 4 ուսուցչուհիներու համար:

Ինչպէս որ բոլոր եկեղեցւոյ յարակից մարմինները, իրենց տարեկան հասոյթը կը փոխանան ծխական խորհուրդին, այնպէս ալ, Պատ. Ծխական խորհուրդը իր ներկայ կազմով, կը պահանջեն խնամակալութենէս, վերեւ յիշուած եւ պահին մէջ իսկ մնացած, սոյն գումարին մէկ մասը, առաջնորդարանի դպրոցներու յատուկ կանոնադրութեանց մէջ, չկայ տալու եւ կամ չտալու այդպիսի թրէնք մը, Ղարձեալ, մեր երկար տարիներու պաշտօնավարութեան ընթացքին, եկող ու գացող Ծխական խորհուրդներ, երբեք չեն համարձակած, պահանջել, ժողովուրդին կողմէ հայ դպրոցին տրուած լուծմաները:

Կուզենք նաեւ յիշեցնել թէ, քիչ ատեն մը պաշտօնավարող, նախորդ խնամակալութիւնը, միայն շրջան մը, փոխանան է իր տարեկան հասոյթը:

Այս կէտ կացութեան առթիւ, խնամակալութիւնս որոշեց, ղիմել Ձեր Պատուարժան միջոցներ, եւ Ձեր բարձր նկատուման յանձնել, այս խիստ կարեւոր դրամական հարցը:

Քանիցս Ծխական խորհուրդոյ ատենապետ, Պրն Եւզ արսլանին, յայտնեցինք թէ, եթէ դրամական ներկ կացութեան մէջ կը գտնուին, իրենք ալ կրնան ղիմել եկեղեցւոյ վերին աւանդապահ մարմինն:

Չստահ ենք որ Ձեր բարձր ժողովը, պարտն ու պատշաճը պիտի տնօրինէ, եւ մեր խնդրանքին լաւագոյն ընթացք մը պիտի տայ:

ՄԱՍՔ ՄԻՏՏ ԱՆԿԵՂՏ
ԽԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ Ս. ԽԱԶ
ՀԱՅ ՎԱՐՁԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Աւստիւր Գ. Մարտիրոս